

դիմանել, բայց չէինք կարող տանել, որ ուրիշները մեր պակասութիւնները մեր երեսին ասեն. մենք վիրաւորւում ենք, որ ուրիշներն ել մեզ հետ միանան, ու մեր սրաի փշանալուցն, որ կարելի է աւելի վատթար բան է, քան թէ իսկ մեր կրքերը, չկարողանալով ճշմարտութիւնը հանգցնել մեր սրուի խորքումը, մենք կուզէինք, որ հանգցնէինք սրտումն այն ամեն մարդոց, որ մեզ մօտենում են:

Մի գժուար բան չէ ճշմարտութեան հպատակելն, երբ որ ճշմարտութիւնը սիրում ենք. բայց ճշմարտութիւնը սիրելը՝ առանց գժուարանալու լսող խոնարհ և հլու սրտով սիրելն է. մեծամուռութիւնը շատ անգամ մեր ծուռ հասկացողութիւնը ճշմարտութեան տեղ է գնել տալի մեզ. մենք կարծում ենք թէ՝ ճշմարտութիւնը սիրում ենք. բայց մենք սիրում ենք միայն առաջուանից մեզ համար կազմած մեր կարծիքն ու մեր սեպհական մոքերը. մենք կարծում ենք, որ ամեն բան զոհում ենք ճշմարտութեան համար, բայց մենք մեր մեծամիտ կամակորութեան զոհերն ենք միայն:

Թարգ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ա. ԷՇՄԻԱԺՆԻ ԳՐԸԴԱՐԱՆ

Հայ ազգի քաղաքական վիճակն ու դիրքն այնպիսի է եղած, որ նա, գտանուելով միշտ երկու իրանից հզօր և դէպի աշխարհակալութիւն դիմող պետութեանց մէջ, անկարող եղած է միշտ ինքնուրոյն քաղաքական կեանք ունենալ. բայց մեծ կշիռ ունեցել է երկուսի աշքումն էլ, որովհետեւ կշեռքի որ թաթում որ տեղաւորուել է, ծանրութիւնը նորա կողմն է քաշել. Երբեմն կռապաշտ զօրեղ պետութեանց և ապա քրիստոնեայ ու կռապաշտ կամ մահմետական պետութեանց մէջ այս դերն է խաղացել հայ ազգը. Երբ հայ ազգն իբրև քրիստոնեայ ազգ հանդէս եկաւ արեելքում, նա կռուածաղիկ եղաւ առաջ Յու-

նաց և կրակապաշտ Պարսից մէջ, իսկ յետոյ Յունաց և մահմետականաց մէջ։ Խոկ միջին դարերում եւրոպացի քրիստոնէից և մահմետականաց մէջ՝ Հայ ազգն, ինչպէս իւր լեզուով, ընաւորութեամբ, քաղաքական կազմակերպութեամբ և ընտուրառանձն այտոկութեամբ առանձին, ուրիշներից, զատուող տարր էր մարդկութեան մէջ, նոյնպէս երբ նա քրիստոնէութիւն ընդունեց ազգովին՝ կազմեց իւր համար իւր ազգային առանձին եկեղեցին էլ որ իւր ծիսական և վարչական կողմոնէ մանաւանդ, միւս քրիստոնեայ եկեղեցիներից բոլորովին տարբեր կերպարանք ստացաւ։ Նորա մէջ ոչ մարմնաւոր իշխանութիւնը վճռական ձայն և կշիռ ունեցաւ, ինչպէս յունականում և ոչ էլ եկեղեցու գլխաւոր կառավարիչը անսխալականութեան յատկանիշ։ ուստի և ի հոգեորս վճռող կիւն իրան սեպհականեց, ինչպէս կաթոլիկ եկեղեցում պապը։

Երբ Հայ ազգի քաղաքական անկախութիւնը, քանի գնաց, նուազեց ու ընկաւ, ազգի ազգայնութեան անկախութիւնը քնականաբար իւր եկեղեցու մէջ ձուլուեցաւ և Հայն իրաև առանձին ազգ, թէե հպատակ այլոց, իւր եկեղեցիով իւր գոյութիւնը պահպանեց։ Ուստի և ինչպէս Հայ ազգի քաղաքական կեանքն իրանց մէջ ձուլել աշխատում էին դրացի հզօր պետութիւնքն, այնուհետեւ նոցա ուշադրութեան առարկայ դարձաւ Հայ եկեղեցին, որ ձգտում էին իրանց մէջ ձուլել թէ յոյն և թէ կաթոլիկ եկեղեցիք յընթացս դարերի և ամեն քաղաքական հանգամանքներից, Հայ ազգի ամեն տեսակ թշուառ վիճակի, աշխատում էին օգուտ քաղել, իրանց այս նպատակին համար։ Օտարների այս քաղաքականութեան գիտատերով իիքն են մեր պատմութեան էջերն և եթէ մենք նրանց մեր գրութեան առարկայ անէինք, շատ պէտք է գրէինք. միայն մեր նպատակն այդ չէ, այլ այն, թէ յոյն և մանաւանդ կաթոլիկ եկեղեցու այդ քաղաքականութիւնն որբան մեծ վնասներ է պատճառել մեր եկեղեցական գրականութեան և որքան խոյընդոտն է եղել նորա անկախ և կանոնաւոր կերպով զարգանալուն։

Ամեն եկեղեցիների գրականութեան նիւթը սկզբնական դարերում եղել են կրօնական զգացմունքը զօրացնելու համար աղօթքներ, մաղթանքներ, եկեղեցական ծէսերն աւելի ճոխ և

ազդու անելու համար գրուածքներ, սուրբ գրոց մեկնութիւններ, ճառեր ի գէմն թէ տէրունական տնօրէնութեանց և թէ առաքելոց և սուրբ անհատների, որոնք իրանց կենցաղավարութեամբ եկեղեցու ծաղիկներն եղան և նպաստեցին քրիստոնէական զգացմանց զարգացման ժողովրդոց մէջ։ Քրիստոնէական եկեղեցիք այս վիճակի մէջ եղայրներ էին հարազատ, հաւասար իրաւունքներով իրանց վարչութեան մէջ և նոցտ մէջ երեացող հօգեւոր հանճարները հաօարակաց էին և ամենքի զարգացման և զօրանալուն միակերպ նպաստում էին։ Այս վիճակում քրիստոնէական եկեղեցու գրականութիւնն ամեն ազգերի մէջ վսեմ էր, ճոխ, բարձր, իդէալական, կարող ազգելու մարդու որտի և մտքի վերայ, նրան կատարեալ երկնաքաղաքուցի անելու, որով և մեկնւում է այն ժամանակների բազմաթիւ նահատակաց ու մարտիրոսաց անձնութիրութիւնը քրիստոնէութեան, մինչև անգամ ամբողջ ազգերի անձնաղոհութիւնը նորա համար։ Բայց երբ եկեղեցականք աշխարհական իշխանութեան ձգտեցան, սկսան իրանց առանձին արտօնութիւններ սեպհականել վերաբերութեամբ այլ եկեղեցեաց, նոքա թշնամական յարաբերութեանց մէջ մտան միմեանց հետ, դաւանական ու ծիսական վէճեր յարուցին և միմեանց վերայ բռնանալ աշխատեցան։ Յայտնի բան է այսպիսի վիճակում այն եկեղեցիք, որոնք աւելի զօրեղ էին և ապահով քաղաքական յաջող հանգամանքների պատճառով, սկսան բռնանալ աւելի թոյլ և անպաշտպան եկեղեցեաց վերայ։ Այսպիսի թոյլ և անպաշտպան եկեղեցիներիցն էր և հայոց եկեղեցին, որովհետեւ Հայերը իրանց քաղաքական անկախութիւնից զրկուելից յետոյ, նշանաւոր մասամբ ընկան Յոյների իշխանութեան ներքոյ։ Յոյն եկեղեցին, թեկն ու թիկունք ունենալով իրան իւր ազգի քաղաքական ոյժը, սկսաւ բռնանալ Հայ եկեղեցու վերայ, մանաւանդ որ սա նոցա երկրում կայացած մի քանի ժողովներին մասնակցած չէր, կարեք չունենալով սորան։ Հերակլ և Կոստանդ Կայսրների բըռնութիւնքը Հայ եկեղեցւոյ վերաբերութեամբ յայտնի է ամենեցուն։ Լաւ է, որ մահմետական Արաբները քաղաքական ախոյեան դուրս եկան Յոյներին և կորղեցին նոցա ձեռքից Հայաստանի տիրապետութիւնն, որով Հայ եկեղեցու պաշտպանութիւնը Յունականի գէմդիւրացաւ, ազատուելով յունական

քաղաքական իշխանութեան բուռն զօրութիւնից, Մնաց միայն պատերազմ գրական ասպարիզում, որ այնքան ծանր չէր հայ եկեղեցու համար ունենալով գիտնական, սուրբ գրոց հմուտ հայրեր: Պէտք է խոստովանել, որ Հայոց սերտ յարաբերութիւնը Յունաց հետ թարգմանչոց դարում, ունեցաւ և իւր օգուտը: Հայոց եկեղեցական գասի յունական լեզուին ծանօթանալը միջոց առուեց նրան յունական եկեղեցւոյ նշանաւոր և հանճարեղ սուրբ հարց շատերի երկերը հայերէն թարգմանելով մեր եկեղեցական ինքնուրոյն գրականութեան մէջ ճոխութեան և վսեմութեան զարգացման: Թէ ոճի և թէ բովանդակութեան կողմանէ նպաստելու:

Կիւրդի, Գրիգոր Աստուածաբանի, Ռուկեբերանի և այլոց երկերի թարգմանութիւնք, ճաշակ և ճոխ գաղափարներ մտցրին հայ եկեղեցական գրականութեան մէջ: Հայ եկեղեցին էլ իւր ինքնուրոյն մեծ սուրբ Հայրերը ծնեցրեց, որոնք այնպէս ճոխացրին հայ եկեղեցու գրականութիւնն ամեն տեսակ կրօնական և աստուածաբանական գրուածքներով, որ նա ոչ միայն որ և քրիստոնեայ եկեղեցու գրականութիւնից պակաս չմնաց, այլ շատերին գերազանցեց: և մի քանի ճիւղերում, հայ եկեղեցու սուրբ հարց երկերը պահպանեցին իրանց ճոխութեան հետ և պարզութիւնն քրիստոնէութեան առաջին դարերի, ազատ ամենայն նախապաշտամունքներից:

Բոլորովին հակառակ ազգեցութիւն ունեցաւ հայ եկեղեցական գրականութեան վերայ, Հայերի սերտ յարաբերութիւնը Արևելունաների հետ: Միջին դարերում Հայոց Կիւիկեան պետութիւնը, խաչակիրների առթիւ, սերտ յարաբերութիւն կապեց արևելունան քրիստոնեայ ազգաց հետ, այն ժամանակ, երբ Հռովմայ պապերի իշխանութիւնը վերին աստիճանի զօրութեան էր հասած և նոքա ձգուում էին բոլոր քրիստոնեայ եկեղեցեաց վերայ տիրապետել:

Բնական է, որ մի ամենից նշանաւոր և բազմաթիւ քրիստոնեայ արևելեան ազգ, որպիսին էր այն ժամանակ հայ ազգը, չէր կարող նոցա՝ պապերի առանձին ուշագրութեան առարկայ չգառնալ. այսպէս ծագեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեան համար մի նոր ահեղ թշնամի: Քանի որ արևելքում խաչակրաց հիմնած Խրուսաղէմի թագոււստութիւնը գո-

յութիւն ունէր և հայ Կիլիկեան թագաւորութեան օգնութեանը կարօտ էր, դոքա փոխադարձ օգնութեամբ պաշտպանւում էին նրանց շրջապատող մահմետական պետութեանց դէմ: բայց երբ Երուսաղէմի պետութիւնը թուլացաւ և ի վերջոյ ընկաւ, մնաց միայն Կիլիկեան հայ պետութիւնը շրջապատած մահմետականներով, նա սիայնակ թոյլ գոլով գիմադրելու բազմաթիւ թշնամեաց, իւր աշքը դարձրեց արեւմոեան քրիստոնէից օգնութեան վերայ, որ միայն պապի միջնորդութեամբ կարող էր լինիլ: Կիլիկեան թագաւորութիւնը, գրեթէ իւր սկզբնաւորութեան օրից, հանգամանքների բերմամբ, ստիպուեցաւ սերտ կապ ունենալ արեւմոեան աղքաց հետ և ըստ հայկական քննութեան, հաւատարիմ մնաց այդ քաղաքականութեան, նա մանաւանդ վերջին Կիլիկեան հայ թագաւորք, որոնք իրանց ծագումով, կրթութեամբ, կրօնական համոզմունքներով աւելի եւրոպացի էին քան Հայադաւան, գրեթէ բոլորովին անձնաւուր էին լատինականութեան: Ահա այն ժամանակ, յուսով օգնութեան պապերից, Կիլիկիայում, թէ արքունի պալատում և թէ եկեղեցական դասի մէջ, կազմուեցաւ զօրեղ լատինամիտ կուսակցութիւն, որոյ միսքն էր կաթոլիկ եկեղեցու հետ սերտ կապերով կապել հայ եկեղեցին, որով յայտնի քան է սորա անկախութիւնը պիտի վնասուէր: Մինչեւ անգամ լատինամիտների այս ձգտումը երկպառակութեան և վիճաբանութեան առարկայ դարձաւ հայ արեւմոեան Կիլիկեան եկեղեցականաց և արեւելեան եկեղեցականաց մէջ, որոնք հաւատարիմ մնացին նախնեաց աւանդութեանց: Այն ժամանակուան արդիւնքն են բազմաթիւ թէ թարգմանական և թէ ինքնուրոյն լատինամիտ գրուածքները հայ եկեղեցական գրականութեան մէջ: Հաւանական է, որ և դաշանց թուղթն էլ այդ դարերի ծնունդ լինի: Կազմուեցաւ Հայերի մէջ ունիթուուց դասը, այսինքն այնպիսեաց, որոնք պապի գլխաւորութիւնը ճանաչում էին:

Սոքա զօրացան, տարածուեցան ամեն տեղ Հայերի մէջ, շատ երկպառակութեանց և թշնամութեանց պատճառ եղան հայ աղքի մասանց մէջ, լրացնելով նորա թշուառութեանց պակասը, Դոքա միայն աղքի մասերի մէջ երկպառակութիւն ձգելով չըքաւականացան, որպէս զի տիրեն, այլ և իրանց յանդուգն մատերը չքաշուեցան կոխել և հայ եկեղեցւոյ նախնեաց գրակա-

նութեան մէջ էլ, աղաւազելով նրանց արտագրելիս կամ արտագրել տալիս։ նոքա ոչ միայն հայ եկեղեցու սուրբ հարց զըրուածքներն են աղաւազել, փոփոխութիւններով և յաւելուածներ նոցա մէջ կոխելով, որոց բոլորի նպատակն է հայ եկեղեցու դաւանութիւնը կաթոլիկ եկեղեցու գաւանութեան մերձեցնել, Պետրոս առաքելոյ աւագութիւնը հաստատելով պապի գերիշխանութիւնը բոլոր քրիստոնեայ եկեղեցեաց վերայ դաւանել տալ, այլ և չեն քաշուել մինչեւ անգամ հայ թարգմանական գրուածքներն էլ աղաւազել։ Զորօրինակ Ոսկեբերանի ճառերի թարգմանութիւնք կարելի է տեսնել մեր ճառընտիրներում, որոնց մէջ այնպիսի անոն և անճոռանի յաւելուածներ կան, որոնք միայն առասպելաբանների ուղեղի ծնունդ կարող էին լինիլ։ Յայտնի բան է որ այս ամենը կատարւում էր ապագայ սերունդի վերայ ներգործելու, սրան այդ աղաւազում զըրուածոց ազգեցութեան ներքոյ դաստիարակելու համար, յօգուտ իրանց գաղափարների։

Այդպիսի փոփոխութիւնք և յաւելուածները պարզապէս աչքի են զարնում, ինչպէս մի գեղեցիկ թանկագին քարերով զարդարած իրեղէնի վերայ կամ թափած քարերի դարդակ տեղերն և կամ նրանց փոխարինող հասարակ քարի կտորները։ Մի քանի ճառընտիրներում գտանուող նոյն ճառերն և վկայաբանութիւններն այնքան տարբերուում են միմեանցից, թէ նախագասութեանց փոփոխութեամբ և թէ յաւելուածներով կամ կրծատումներով, որ նոցա տարբերութիւնք հանել ցանկացողը պէտք է կրկնապատիկ ընդարձակութեամբ գրուածք պատրաստէ։ Դժբաղդաբար ի շնորհս անընդհատ օրածութեանց և յափշտակութեանց հայաստանում, գուցէ և հայ եկեղեցու խորթ զաւակների՝ ունիթունների աշխատանաց, հին ձեռագիրներ, որոնք գրած լինէին լատինամիտների մեր մէջ յայտնուելից առաջ, շատ քիչ են մնացած։ Ուստի և մնումէ հետամուտ լինել և իմանալ, թէ ներկայ ձեռագիրներն ուր և ում ձեռքով կամ ում թելագրութեամբ գրուած են. բայց սյամեզ էլ մի գիտաբութիւն է հանդէս դուրս գալիս, այն է, որ այն ձեռագիր յիշատակարան չունի, շատերն էլ պակասաւոր են, առաջին և վերջին թերթերը անհետայացան։ Ուստի և ճշշմորտութիւնն ու իսկութիւնը գրուածքների վերականգնելու համար խիստ գիտնական քննութեանց և մանրակրկիտ զնու-

թեանց վերայ յոյս դնելու է։ Մեր ասածների մասին ապացոյց և նախնեաց գրութեանց աղաւաղմանց մասին ճաշակ տալու համար Արարատի ընթերցողաց, մենք ապագայում աշխատ կը լինինք հրատարակելու այդպիսի փոփոխութեանց և աղաւաղմանց փոքրիկ ժողովածու։

Լ. 1749 ձեռագրում ի միջի այլ գրութեանց, կայ գրան և մի համառօտ գրութիւն — «Պատմութիւն Անի քաղաքի վերնագրով», որ գրել է Կաֆա (Թէոդոսիա) քաղաքում, Թրակիոյ առաջնորդ Արքահամ բարունապետն (Կրետացին արդեօք) և բանի սպասաւորը 1756 թուականին։ Արքահամ վարդապետը, որոյ գըրուածքի այն մասն, որ վերաբերումէ Անի քաղաքի հիմնարկութեան և մատոնութեան յունաց ձեռքը ոչ մի հիմք չունի և հակառակ է յայտնի և ճշգրիտ պատմութեան, աւելի ընդարձակորէն պատմում է Անու կործանման պատճառների մասին, որ հաւանական է թէ հաւաքած լինի Կաֆայի հայերի մէջ մնացած աւանդութիւններից, որովհետև նոքա Անույ գաղթականք եղած են, ինչպէս երեւումէ գրութեան վերջաբանութիւնից։

Անոյ կործանման առիթները հետևեալներն է համարում բարունապետը։ Նախ անեցիք մատնելով յունաց ձեռքը քաղաքը և ազատ մնալով իբրև իրանց վերայ իշխող ազգային թագաւորից ուստի Երևալ ամենայն ու ըստ համայնչ որպէս իւրեանց և մտանելով Եօննապարհապնդ Երևոնի մէջ, կարծում էին թէ կարող են ազատուել Աստուծոյ բարկութիւնից, ուստի և հպարտացան և ոչ ոքին չէին հաւանում բացի իրանցից։ Երկրորդ սաստիկ նախանձ ունէին միմեանց դէմ; ոչ մէկը հաշտ աչքով չէր նայում ընկերոջ յառաջադիմութեան վերայ, որ և է ասպարիզում։ Երրորդ այնքան ինքնահաճոյք և կամապաշտ էին, որ ոչ ոքին չէին լսում, ոչ ծերերին և ոչ վարդապետներին, իւրաքանչիւր ոք իրան ամենից խելօք համարելով։ Զորրորդ ծուլութիւնը ամենքին տիրել էր, ոչ ոք առանց աղախնի և ծառայի չէր վարւում, մինչեւ անգամ եկեղեցի ձիով էին գնում և եկեղեցու դրան էլ ձիով կանգնած, աւետարանը դուրս բերել տալիս համբուրում և նշխարք առնելով վերագառնում թատրումներ, ձիարշաւի և այլ զուարճութեանց տեղեր։

Հինգերորդ, ագահութիւնն ու արծաթսիրութիւնն այնպէս արմատացել էր անեցոց մէջ, որ ընկերին զրկելն ու նորա ժառանգութեան տիրապետելու ցանկութիւնն և գործադրութիւնը սովորական է եղած:

Վեցերորդ երկիր բարեքերութեան պատճառով որկրամոլութիւնն և արբեցութիւնը շատ տարածուած է եղել անեցոց մէջ, որոյ հետեանքն են խաղ, պար և զեղսութիւն: Եօթներորդ անչելչ պրանիս-նի-ն, ճանառանոր աղբաղզո-նի-ն, որով աշխատումէին իրանց հարստութիւնը պահպանելու համար մերձաւորաց մէջ ամուսնութիւն անել կամ յայտնի պոռնկութեամբ ապրել ազգականոց հետ, յուսալով, որ իրանց հազար և մի եկեղեցեաց պատճառով Աստուած չի բարկանալ նոցա վերայ և չի յիշիլ նոցա մեղքերը: Մեծ երախտիք էին համարում Աստուածոյ առաջ, որ հազար ու մի եկեղեցի են կառուցել և նոցա պահպանութեան համար իւրաքանչիւրին պարզեց էին և Յէ-նահանն և և այժի: Այս պատճառով անեցիք հպարտացել էին և անմոտացել, ընկել էին անձնապաշտութեան, լկտութեան և զազիր յիշոցատուութեան մէջ: Այնքան օտարատեաց էին, որ գրսից եկած վարդապետներին և խրատտուներին էլ ոչ միայն չէին լսում, այլ և ծաղրում էին: Այսպէս ըստ աւանդութեան երկու գրակալ ունէին եկեղեցում, մէկն երկար և միւսն կարճ: Եթէ խրատտու եկաւոր վարդապետը կամ քահանան կարճահասակ էր, երկար գրակալն էին նորան առաջարկում և իրանք սկսում ծաղրել և կատակ անել: Այսպիսի վարմունքով բարկացուցին Աստուածոյ, որ նրանց պէտք է ջնջէր: բայց իւր ողորմութեամբ ուղարկեց նոցա խրատտու Յավհաննէս: Լարդապէտին, «Պ հականուածք Պար- էր կուլում», ու հականուածք Պար- էր կուլում, գուցէ սորա խրատ- ներով սթափեն և զջջան և ապաշխարեն իրանց մեղքերը: Բայց անեցիք անպատուութեամբ ընդունեցին Աստուածոյ ու- ղարկած պաշտօնէին և ծաղրեցին նրան բարձր գրակալ առաջը դնելով, որովհետեւ կարճահասակ էր: Բայց սուրբ վարդապետն անգիր գիտէր բոլոր ընթերցուածներն: ուստի և անսխալ կար- գում էր: Երբ անեցիք ջխրատուեցան Յովհաննէս վարդապետի խրատներից և զջջացին, Աստուած պատժեց նրանց սաստիկ մահով, ոչ անելույնին էնց և զարհաւուց էր էլելով էացած յայտ-

նաղես զմանկունս է գիշես ճարց, և լորս է ճակինս, դմանս է մէջ գոյ,  
և լոյլ է յացիսաւս մինչ զէ յերեց մասանց մին հաց: Այս հարուա-  
ծից փոքր ինչ զգաստանալով մարդ են ուղարկում, գտնում  
Յովհաննէս վարդապետին և վերադարձնում քաղաք և նա  
Խրատումէ նրանց, որ թողնեն իրանց չարութիւնքն և աղգա-  
պղծութիւնն և յանդիմանում էր նրանց վատ վարուց և բա-  
ռուց համար: Անեցիք բարկանում են և ձգում են նրան բան-  
դը՝ և աւելի մի խնաւ և ժահահատ, ասելով որ պատարագ մա-  
տուցանէ և Աստծուն հաշտեցնէ իրանց հետ, ապա թէ ոչ կըս-  
պանեն նրան: Ճարահատեալ վարդապետը պատարագ է մատու-  
ցանում մայր եկեղեցում և երբ աշխարհ է իջնում ու խըն-  
կարկում, բուրվառից բոց է բարձրանում և այրումէ 400  
հոգի: Այս տեսնելով անեցիք ընկան վարդապետի ոտքերն և առ-  
ժամանակ զղջացին, բայց կարճ միջոցից յետոյ էլի ընկան ի-  
րանց անբարոյականութեան մէջ. ուստի և Տէրը բարկանում է  
և ուղարկում լար և այլակերպ գաղանենէն, իշտե գայլէր: այ գայլն է մէջ  
գիշերի և մուսնէն է պառա և սնորսակարսունենին, զիշտայդին, մանաւանդ  
զարաւունեակն և զմանէնա յափշտակեալ պառէին: Այս պատժից  
սարսափած անեցիք որոնում են Յովհաննէս վարդապետին և  
գտնում են նրան մի գիւղում, զղջում են և ուսներն ընկնե-  
լով խնդրում են հաշտեցնել Աստուծոյ: Այս միջոցին գալիս է  
և մի կին, որ բերում է իւր միամօր զաւակի յօշոտեալ և գի-  
շատեալ մարմինն և Յովհաննէս վարդապետն ազօթելով Աս-  
տուծոյ՝ յարութիւն է տալիս մեռեալին Աստուծոյ զօրիւ-  
թեամբ, որովհետև անմեղ են լինում թէ մայրն և թէ որդին:  
Այս հրաշքը տեսնելով ուրիշներն էլ խնդրում և պահանջում  
են որ իրանց մեռեալներին էլ յարութիւն տայ: Վարդապետն  
ազօթում է ասելով: Ու ու անեղս էն է առցանէ եղից էժշկանիւն,  
ապա նէ աւ Ասպուած լուժիների լոյն ըստ հանուց իւրաց, և ահա  
գայլերը յարձակում են և գիշատում շատերին: Այս տեսնե-  
լով զղջում են անեցիք և դառնում են իրանց չար գործերից  
բայց երեք ամսից մոռանում են իրանց կրած պատիմներն, ո-  
րոնք վերագրում են պատահմունքի, և կրկին ընկնում են  
մեղաց մէջ: Յովհաննէս վարդապետը կրկին գալիս է Անի, ոկր-  
սումէ խրատել և յանդիմանել, բայց անեցիք փոխանակ զըդ-  
ջալու բարկանում են և խմեցնում են նրան թմրագեղ, մերւ-

կացնում են նրան և մի սայլի մէջ ձգած ման են ածում քաղաքում, իբրև ծաղյ ծանակի և յետոյ բերելով աւագ եկեղեցւոյ դուռը, զամբիւղի մէջ դնում և կախում պատից, որպէս զի մտնող և ենողները տեսնեն և ծաղրեն։ Երբ Յովհաննէս վարդապետը սթափում է իւր թմրութիւնից և տեսնում իւր վիճակը, հոգոց է հանում և դառնապէս լալիս է։ Ժողովուրդը նրան վայր է բերում, բրածեծ առնում և արտաքսում քաղաքից, երկիւղ տալով, որ այլ ևս չհամարձակի քաղաք ոտք կոխել, ուպա թէ ոչ կոպանեն նրան։ Յովհաննէս վարդապետը դուռս գալով Անիից բարձրանում է մի բլրի վերայ և անիծում է Անին և ծունր իջնելով ասումէ։ «Տէր այլ ու լինի՞ Երանէասուր, այսուներեւ լոր ինչ կամու, այնովէս արա : Աստուծոյ բարկութիւնից իսկոյն քաղաքը սկսում է շարժել, պարիսպները տապալել և շինուածքները քանդուել, Ժողովուրդը թողնելով տաղաւը, եւ իշխեցիւն, «Աչեղծ պայտներն և ծառակաւէտ դաշտերը փախչում է գէպի Զուղա, միւսը Կառպից ծովի ափերը, միւսը գէպի Վան և այլք գէպի Սիս։ «Իսկ այնք, որ անցին ընդ ծովն Կասպից գնացեալ յարեցան ի յազգն Նետողաց, զոր Թաթար ասեն և առեալ Հրաման ի Թաթար խանէն ընակեցան ի յԱզգարայ կոչեցեալ վայրի, որ է մերձ Աժդերիսանու և յետ ոչ բազում ամաց զզուեալ ինետողաց դըժնաբարոյ ազգացդ, գեսպան յղեն ի Կաֆա (Քէոդոսիա) առ լատին իշխանն, որ էր ի մէջ բերդին, զոր Ֆրանկ-հասար ասեն, և ուխտ եղեալ ընդ իշխանն հաստատապէս չուեալ գան ի Կաֆայն և ոմանք ի Դոկմ լեռնամիջի (Էսկի Դոկմ) և կէսք անցեալ գնան ի Լեհաց տունն և կէսք յԱզքիրման։ Իսկ որք մընացին ի Կաֆայն սկսան եկեղեցիք և վանորայք շինել։ Բայց զի ամենեքեան ոչ կարացին ի ներքս բերդին լինիւ վասն փոքրութեանն և աղջն նետողաց, ըստ ընիկ առվորութեանն իւրեանց, գնային գաղտադողի և յափշտակէին զուստերս և զգստերս նոցա և տարեալ վաճառէին։ Մերազնեայք, յորժամ տեսին զայս, կրկին գաշն եղին ընդ լատին իշխանին և Հրաման առին վասն ինքեանց նոր բերդ շինել կից հին բերդին և սկսան շինել։ Քառասուն տարին ապա կատարեցաւ մեծ պարիսպն և Յ ամ վայելեցին և յետ երից ամաց էառ Տաճիկն։ Եւ եղեւ սկիզբըն գալուն իւրեանց ի Կաֆա 780 թ. և ըստ Կենարարին

(փրկչական) հազար երեք հարիւր երեսուն և մէկ :

Անիի անկման վերոյիշեալ պատճառները ցոյց են տալիս, որ Անին յիրաւի բազմամարդ՝ առեւտրով փարթամասցած քաղաք է եղած։ Փարթամութեան հետեանք են շռայլ, զեղիս և անբարոյական կենցաղավարութիւնը, մանաւանդ մոտաւորապէս և բարոյատիկ չզարգացած ժողովրդի մէջ, որ մոտաւոր զարդացումից զուրկ լինելով, բնականաբար անձնատուր պիտի լինի մարմնաւոր կեսնքի զարգացման անբարոյականացնող զուարճասիրութեան, հարուստ նիւթական վիջոց ունենալով առ այն Խոկ բնական պատիմներն, որոնք Աստուած ուղարկել է Անեցւոց վիրայ, ինչպիսի են սաստիկ մահը, գայլերի բազմանալը, բուրգառի բոցով 400 հոգու այրուելը եկեղեցու մէջ, յիշեցնում են Խօրայելացւոց ազգի պատմութեան մէջ յիշատակուած մի քանի իրողութիւնք։ Անւոյ աւերման գլխաւոր պատճառը, բացի թշնամեաց յափշտակութիւններից և քաղաքի վիճակի անտպահովութիւնից, երկրաշարժն է, որ վերջնական հարուածը տուել է նրան։ Պատմութեան վերջին կտորը հաստատում է այն կարծիքն, որ Ղրիմի, Նոր Նախիջևանի և Լեհաստանի օտարացած հոյերի մի մասը Անւոյ գաղթականք են։

№ 1382 ձեռագրում, որ Գործք Առաքելոցի մեկնութիւն է, կայ յիշատակարան գրած 1766ին էջմիածնում, Պարսկից թագաւոր Քերիմ խանի ժամանակ, որ աիրացաւ Պարսկաստանին 1762—1778 տասնամեայ անընդհատ պատերազմներից յետոյ։ Յիշատակարանում գրած է։

«Գրեցաւ գիրքս ի թուին ՌՄՃԵ ին ի սուրբ Էջմիածին, ի թագաւորութեան Պարսկից Քերիմ խանի և ի Հայրապետութեան սուրբ և Աստուածական Սթոռոյս Տեառն Սիմէօնի Սրբազն Կաթողիկոսին, որ և Տէր Աստուածատացէ սմա զիեանս խաղաղական մինչեւ ի խորին ծերութիւն զի ժամանակս մեր և անցեալ ոչ նստաւ այսպիսի Հայրապետ սուրբ Աթոռումն զի է սա հեզ, խոնարհ, մարուր և ամենայնի խաղաղասէր և ոչ կամի թէ խոզարածն ևս տրտմի։ այլ ամենայնի ըստ կարգին շահէ և մսիթարէ։ Յաւուրս սորա նորոգեցաւ պարիսպ սուրբ Աթոռոյս և Աւեհարան մի գեղեցիկ Հարաւային կուսէ և սեղանատան կէսն, որ քայքայեալ է, զի ոչ կարէի Համարձակիլ ի սեղանն (երթալ)։ թէ գուցէ անկանիցի ի վերայ մեր, և այլ բազում շինութիւն և պայծառութիւն սրբոյ Աթոռոյս արար երանիս (երանելիս), ի պարոնութեան յերևան Քաղաքիս Յուսէն Ալի խանին։ որ էր այր գաղանաբարարոյ և չարասէր, որ ոչ տայր գուլ սոյն Սիմէօն կաթու-

զիկոսի կեալ հանգիստ ժամ՝ մի, այլ միշտ և հանապազ ինդրէր ի սմանէ փող և չուխայ և ոսկի և այլ բազում ինչ. Տէր Աստուած տացէ սմա (կաթողիկոսին) կարողութիւն և իմաստութիւն զի սուրբ Աթոռս կառավարեսցէ, զի յաւուրս սորա էրն կարգաւորը սուրբ Աթոռումն Ճ (100) և աւել ես և Ի (20) սարկաւագք, և Ծ (50) խցի մոնթ և Խ (40) վարժատան մոնթ Յորում (ժամանակի) սուրբ տօնս իրրե զդրախան եղեմայ պայծառացեալ էր, յօրում ես նուաստ և ոտից մոխիրս հարցդ և եղբարդդ գրեցի սուրբ գիւղս. և այլն ».

Սրանից յետոյ արտագրիչն, որ եղել է Վարդան Սարկաւագ Աստապատցին, ինդրում է ընթերցողաց իրանց աղօթքում յիշել իրան, ծնողաց, եղբարց և այլոց՝ դնելով ամենքի անունները:

### ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԱՄԱԴՕՏՈՒԹԻՒՆ

(Պ. Գնունու : Ցոմարական, համառօտ գիտելիք գրքուկի առթիւ.)

Հայկական գպրութիւններից մէկը պէտք է համարուի Տոմարագիստութիւնը: Բայց այսօր մօտաներով կարելի է հաշուել այն անձանց թիւը, որոնք որ տեղեակ են այդ կարեւոր գիտութեան, այնպէս որ ժամանակով գուցէ մարդ չունենանք, որ կարողանայ ամենայն հանգամանկներսկ ճիշդ կազմել մեր օրացոյցը: Ուստի գովութեան արժանի է Պ. Ս. Գնունու աշխատութիւնը, որ նոյն ինդրի քննութիւնը նորոգում է մեր գրականութեան մէջ:

Այս տեղ զետեղուած է նաև մի աղիւսակ, որոյ մէջ ամիսովուած է Զորհացիւրանայ օրացայց յութեան գումարին: Ով որ այս տեսակ հաշիւներին հետաքրքիր է, նոցա համար հրատարակում ենք մի այլ աղիւսակ, որ իւր մէջ ամիսովումէ Աշուշվեասոր օրացայց յութեան և գրիչուեան պահանջի: Որ և մեծ մաթեմատիկոս Գառափի գործն է և ինչ ինչ կարեւոր պատմական ծանօթութեանց բանակի:

Քայտնի է որ Նիկիոյ Ս. Ժողովի մէջ (325ին) սահմանեցին, թէ զատիկը տօնուի այն կիւրակէ օրը, որը որ գարնան գիշերահաւասարից յետոյ առաջին անգամ լուսնի լրման անմիջապէս կը հետեւի: Գիշերահաւասարի պատահմանքը ընդ միշտ համարուեցաւ մարտի 21, որ և իրօք այն ժամանակուայ համար սխալ չէր: Բայց լուսնի լրումը որոշելու համար գործ չէին գնում